ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԴԵՐԻ ԲԱՐԶՐԱՑՈՒՄԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ս. Շ. ԻԿՐՏՉՅԱՆ

Սոցիալիզմի զարգացման և կատարելագործման հետ մեկտեղ անշեղորեն աճում է ՍՄԿԿ ղեկավար դերն ու նշանակությունը։ Դա կոմունիստական հասարակարգի զարգացման կարևոր օրինաչափությունն է և պայմանավորված է կուսակցության գործունեության հիմնական խնդրով՝ հասարակության զարգացման գլխավոր հեռանկարի մշակմամբ ու դրա իրագործման տնտեսական նախադրյալների ստեղծմամբ։ Հստակորեն սահմանելով սոցիալիստական պետության և նրա առաջատար ուժի՝ կուսակցության գլխավոր խնդիրները, Վ. Ի. Լենինը տնտեսությունը դիտում էր որպես գլխավոր քաղաքականություն, որի հաջողությունից վճռականորեն կախված է սովետական հասարակության առաջընթաց շարժումը դեպի կոմունիզմ։ «Կոմունիզմը մենք գնահատում ենք միայն այն ժամանակ,— նշում էր Վ. Ի. Լենինը,— երբ նա հիմնավորված է տնտեսապես»[1]։

Սովետական ժողովրդի առաջընթացի և մեր երկրի միջազգային դիրքերի ամրապնդման խնդիրները վճռականապես կախված են տնտեսական հաջողություններից։ Այդ պատճառով էլ այժմ կուսակցությունը հիմնական ուշադրությունը դարձնում է կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծմանը։ Հաջողությամբ ավարտելով ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա և ութերորդ հնգամյակի պլանները՝ սովետական ժողովուրդը խոշոր քայլ կատարեց նոր հասարակարգի տնտեսական հիմքերի ստեղծման, երկրի ռազմական հզորության ամրապնդման և ժողովրդի կենսամակարդակի բարձրացման ուղղությամբ։

ՍՄԿԿ XXIII—XXIV համագումարների միջև ընկած ժամանակը «եղավ մեր մեծ լենինյան կուսակցության հետագա աճի և ամրապնդման ժամանակաշրջան, ժողովրդի հետ նրա կապերի հետագա ամրապնդման, սովետական հասարակության ամբողջ կյանքում նրա ղեկավար դերի աճի ժամանակաշրջան։ Կուսակցությանը հարկ եղավ այդ տարիներին լուծել ոչ քիչ թվով բարդ խնդիրներ։ Ընդհանրացնելով կոմունիստական շինարարության կուտակված փորձը, կուսակցությունը մշակեց քաղաքականության սկզբունքային, ռեալիստական կուրս, որը հավանությամբ ընդունվեց և միահամուռ պաշտպանություն գտավ ամբողջ սովետական ժողովրդի կողմից»[2]։

---

* Հոդվածում լուսաբանվում է Հայաստանի կոմկուսի գործունեությունը արդյունաբերության ղեկավարման ուղղությամբ ՍՄԿԿ XXI—XXIV համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում։

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 224։

2 «ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը», Երևան, 1971, էջ 4։

Դեռևս 1918 թ. նոյեմբերին Վ. Ի. Լենինը կուսակցության ղեկավարումը հրավիրելով տնտեսության ղեկավարման ձևերի և մեթոդների անընդհատ կատարելագործման հարցերին, գրել է. «Ամբողջ գործը նրանումն է, որ չբավականանանք այն հմտությամբ, որ մշակել է մեր մեջ մեր նախկին փորձը, այլ անպայման ավելի առաջ գնանք, անպայման ավելի շատ բան ձեռք բերենք, անպայման ավելի հեշտ խնդիրներից անցնենք ավելի բարդ խնդիրների։ Առանց դրան ոչ մի առաջադիմություն ընդհանրապես հնարավոր չէ, անհնարին է նաև առաջադիմությունը սոցիալիստական շինարարության մեջ»[3]։

Տնտեսական շինարարության կուսակցական ղեկավարման ստեղծագործական բնույթի վերաբերյալ Լենինյան սկզբունքները նոր դրսևորում գտան ՍՄԿԿ ծրագրում, ՍՄԿԿ XXIII և XXIV համագումարներում ու կուսակցության Կենտկոմի պլենումների փաստաթղթերում։

ՍՄԿԿ ծրագրում նշված է, որ կուսակցությունը առաջիկայում ևս կշարունակի կատարելագործել իր աշխատանքի ձևերն ու մեթոդները, կձգտի այն՝ բանին, որպեսզի մասսաների նկատմամբ նրա ղեկավարման մակարդակը համապատասխանի կոմունիստական շինարարության աճող բարձր պահանջներին, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, հասարակության հոգևոր կյանքի զարգացման խնդիրներին։

Երկրի ժողովրդական տնտեսության ղեկավարումը բարելավելու ճանապարհին չափազանց կարևոր նշանակություն ունեցան ՍՄԿԿ Կենտկոմի 1964 թ. հոկտեմբերյան և նոյեմբերյան, 1965 թ. մարտյան և սեպտեմբերյան, 1966 թ. մայիսյան, 1969 թ. դեկտեմբերյան, 1970 թ. հուլիսյան ու մյուս պլենումները։

Ինչպես ամբողջ կուսակցության, այնպես էլ նրա մարտական ջոկատներից մեկի՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության համար ՍՄԿԿ XXI—XXIV համագումարների միջև ընկած ժամանակաշրջանը հագեցված էր տնտեսական և կուլտուրական շինարարության բնագավառներում կուսակցական ղեկավարման ձևերն ու մեթոդները կատարելագործելու համար ծավալված եռանդուն աշխատանքով, որտեղ ընդգծված ձևով դրսևորվեց կուսակցության ղեկավար դերի հսկայական աճը։ Հանրապետության կուսակցական կազմակերպությունների և աշխատավորության ակտիվ գործունեության շնորհիվ ձեռք բերվեցին մեծ հաջողություններ։

Հայկական ՍՍՀ աշխատավորները ժամկետից մի քանի ամիս շուտ կատարեցին ինչպես յոթնամյա պլանի, այնպես էլ ութերորդ հնգամյակի առաջադրանքները։ Այդ տարիներին հանրապետության արդյունաբերության արտադրանքը աճեց 3,5 անգամ[4]։ ՀԿԿ XXV համագումարը վերլուծելով հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման ութերորդ հնգամյակի արդյունքները, նշեց, որ ժամանակակից տեխնիկայով հագեցված Հայաստանի բազմաճյուղ արդյունաբերությունն աճում է չափազանց բարձր տեմպերով։ Համախառն արտադրանքի տարեկան միջին տեմպերը ութերորդ հնգամյակի տարիներին հանրապետությունում կազմեցին 12,5 %, 1961—1965 թթ. 9,4%-ի դիմաց։ Այդ ժամանակամիջոցում ՀՍՍՀ ժողովրդական

---

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 235։

[4] «Народное хозяйство СССР в 1970 г.», М., 1971, стр. 139.

տնտեսության մեջ կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը կազմեց 3 մլդ. 210 մլն. ռ. (արդյունաբերության մեջ 1 մլդ. 234 մլն. ռ.)[5]։

Հայաստանի արդյունաբերությունն առաջ ընթացավ ՍՍՀՄ արդյունաբերության զարգացմանը գերազանցող տեմպերով։ Միայն 1966—1970 թթ. հանրապետությունում կառուցվեց և շահագործման հանձնվեց 110 արդյունաբերական ձեռնարկություն և խոշոր արտադրամաս (այդ թվում՝ Երևանի ավտոմոբիլային, քիմիական ռեակտիվների, Ղափանի հարստացուցիչ գործարանները, Երևանի նորաձև կոշիկների, Ալավերդու կապրոնե թիկնոցների ֆաբրիկաները, գինու, կոնյակի գործարաններ, պանրի ու կաթի և այլ ձեռնարկություններ)։ Դրա շնորհիվ արդյունաբերության հիմնական ֆոնդերն աճեցին ավելի քան 60 %-ով[6]։ Հատկանշական է, որ ամբողջ աճի շուրջ 4/5-ը ապահովվեց աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին։

Հանրապետությունում հատկապես արագ տեմպերով զարգացան գունավոր մետալուրգիան և քիմիական արդյունաբերությունը։ Արդյունաբերության մեջ առաջատար տեղ գրավեց մեքենաշինությունը, որը սկզբունքային նշանակություն ունի ժողովրդական տնտեսության տեխնիկական վերազինման գործում։ Հայաստանում գործում էին թվով 130 մեքենաշինական գործարաններ, որոնք թողարկում էին բազմաթիվ արժեքավոր արտադրատեսակներ։ 1966—1970 թթ. մեքենաշինության արտադրանքի ծավալն աճեց 2,17 անգամ[7]։ Հատուկ ուշադրություն դարձվեց հումքի տեղական պաշարների օգտագործմանը, դրանց արդյունավետ համալիրային վերամշակմանը։ ՀԿԿ Կենտկոմը և ՀՍՍՀ կառավարությունը սկսեցին հանրապետությունում իրականացնել նոր տնտեսական գիծ, որի նպատակն էր բնական հումքից ստանալ հնարավորին չափ շատ ածանցյալ արտադրատեսակներ։

Հայաստանում վերջին տարիներին հատկապես արագ տեմպերով զարգացան սարքաշինությունը, էլեկտրոնիկան, ռադիոէլեկտրոնիկան, գործիքաշինությունը և մաթեմատիկական հաշվիչ մեքենաների արտադրությունը։ Դա նպաստեց ամբողջ արդյունաբերության տեխնիկական առաջադիմությանը և արդյունաբերության մեջ ներգրավեց բարձր որակավորման բազմաթիվ բանվորների։ ՀԿԿ Կենտկոմի նման քաղաքականությունը դրական ներգործություն ունեցավ հանրապետության արդյունաբերության կառուցվածքի վրա։ Արդյունաբերության մեջ այս կարևոր ճյուղերի արտադրանքի տեսակարար կշիռը 1958 թ. 26,4 %-ից 1965 թ. հասավ 43,4 %-ի[8]։

Յոթնամյակի և ութերորդ հնգամյակի տարիներին ՀԿԿ Կենտկոմը և հանրապետության կառավարությունը շարունակեցին արտադրության հետագա ինտենսիվացման, արտադրական կարողությունների լավագույն օգտագործման և արտադրողական ուժերի արդյունավետ տեղաբաշխման կուրսը։ Տնտեսության կուսակցական ղեկավարման հիմքում դնելով քաղաքական և

---

5 Տվյալները վերցված են ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր կենտրոնական վիճակագրական վարչությունից։

6 Ա. Ե. Քոչինյան, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմունիստական կուսակցության XXV համագումարին, Երևան, 1971, էջ 12։

7 Նույն տեղում, էջ 14։

8 Ա. Ե. Քոչինյան, Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմպարտիայի XXIV համագումարին, Երևան, 1966, էջ 7—8։

տնտեսական ղեկավարման միասնականության լենինյան սկզբունքները՝ ՀԿԿ Կենտկոմը, քաղաքային և շրջանային կոմիտեները, սկզբնական կուսակցական կազմակերպությունները արմատապես կատարելագործեցին իրենց աշխատանքները։

Հանրապետության ժողովրդական տնտեսության ճիշտ ղեկավարումը ապահովելու համար հարկ եղավ նախ և առաջ հստակորեն պարզել նրա զարգացման հեռանկարները։ Յուրաքանչյուր տնտեսական խնդիր լուծելիս, հաշվի առնվեցին նաև տնտեսության զարգացման սոցիալ-քաղաքական հետևանքները։

Կուսակցական կոմիտեներին սկսեցին հուզել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են արտադրության մեջ տեխնիկական առաջադիմության նվաճումների արմատավորումը, արտադրության արդյունավետության բարձրացումը, հիմնական արտադրական ֆոնդերի խելացի օգտագործումը, աշխատանքի դիտական կազմակերպման և տնտեսության ղեկավարման հրատապ հարցերը։ Այսպես՝ 1970 թ. մայիսին ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի պլենումը քննության առնելով «ՍՄԿԿ դեկտեմբերյան (1969) պլենումի որոշումների լույսի տակ տեխնիկական առաջադիմության արմատավորման ուղղությամբ քաղաքի կուսակցական կազմակերպությունների խնդիրները»[9] հարցը համակողմանիորեն վերլուծեց ձեռնարկություններում տիրող վիճակը և ցույց տրվեց արդյունաբերության մեջ գիտության և տեխնիկայի նորությունները արագ կերպով ներդնելու ուղղությամբ մայրաքաղաքի կոմունիստների խնդիրները։ ՀԿԿ Լենինականի քաղկոմի պլենումը 1970 թ. հունվարին, անդրադառնալով հիմնական արտադրական ֆոնդերի ժամանակին գործարկման և նրանց արդյունավետության բարձրացման հարցերին, քաղաքի կուսակցական կազմակերպություններին նպատակամղեց կառուցվող արդյունաբերական նոր օբյեկտների արագ գործարկման, մեքենասարքավորումների և բանվորական ուժի արդյունավետ օգտագործման խնդիրներին[10]։ 1971 թ. փետրվարին ՀԿԿ Հրազդանի շրջկոմի պլենումներից մեկում քննության առնվեցին շրջանի արդյունաբերական համալիրի զարգացման հեռանկարների և այդ ուղղությամբ տեղի կուսակցական կազմակերպությունների խնդիրները[11]։ Պլենումը կոմունիստների ուշադրությունը բևեռեց շրջանի զարգացման հեռանկարային պլանների խելացի կազմման և շրջանում կառուցվող պետական կարևորություն ունեցող արդյունաբերական օբյեկտները ժամանակին գործարկելու հարցերի վրա։ Կուսակցության Աբովյանի շրջկոմը 1970 թ. նոյեմբերին քննարկեց շրջանի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրական հզորությունների առավելագույն արդյունավետությունն ապահովելու հարցը[12]։

Քաղաքային և շրջանային կոմիտեների պլենումներում, սկզբնական կուսակցական կազմակերպությունների ժողովներում և բյուրոյի նիստերում

---

9 Текущий архив Ереванского ГК КП Армении, стенограмма IX пленума ГК, от 29 мая 1970 г.

10 ՀԿԿ Լենինականի քաղաքային կոմիտեի ընթացիկ արխիվ, քաղկոմի 1970 թ. հունվարի 20-ի պլենումի արձանագրություն։

11 ՀԿԿ Հրազդանի շրջանային կոմիտեի ընթացիկ արխիվ, շրջկոմի 1971 թ. փետրվարի 5-ի պլենումի արձանագրություն։

12 ՀԿԿ Աբովյանի շրջանային կոմիտեի ընթացիկ արխիվ, շրջկոմի 1970 թ. նոյեմբերի 12-ի պլենումի արձանագրություն։

քննության էին առնում նաև շչոկինյան քիմիագործների և բազմաթիվ այլ առաջավոր կոլեկտիվների աշխատանքի մեթոդների արմատավորման հարցերը, սոցիալիստական մրցության ձևերի կատարելագործման խնդիրները։

Կուսակցության XXI—XXIV համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում հանրապետության կուսակցական կոմիտեները սկսեցին գործել առավել գործիմացությամբ՝ կազմակերպական և քաղաքական-դաստիարակչական աշխատանքների քննություն բռնած մեթոդներով։ Ելնելով լենինյան այն ցուցումից, որ «Ամբողջ պրոպագանդան պետք է կառուցվի տնտեսական շինարարության քաղաքական փորձի վրա»[13], ՀԿԿ բոլոր կոմիտեներն ու ընկերական կուսակցական կազմակերպություններն աշխատեցին հաղթահարել պրոպագանդիստական աշխատանքի մեջ նկատվող որոշ միակողմանի բնույթը և այն առավել սերտորեն կապել կոմունիստական շինարարության առօրյա խնդիրների հետ։

Կուսակցական կոմիտեների և սկզբնական կուսակցական կազմակերպությունների՝ որպես քաղաքական ղեկավարման օրգանների դերի բարձրացումը դրսևորվեց նաև կադրերի ընտրության, տեղաբաշխման, դաստիարակման և ընդունված որոշումների կատարման ստուգումը բարելավելու մեջ։ Քննարկվող ժամանակաշրջանում հանրապետության կուսակցական օրգանները առավել հանգամանորեն էին վերլուծում կադրերի հետ տարվող աշխատանքները։ Այդ հարցերը հաճախակի քննարկվում էին կոմիտեների պլենումներում, բյուրոների նիստերում և սկզբնական կուսակցական կազմակերպությունների ժողովներում։

Գիտատեխնիկական մեծ առաջընթացի, արտադրության և աշխատանքի բնույթի մեջ կատարվող որակական փոփոխությունների պայմաններում ավելի քան երբևէ անհրաժեշտություն է դարձել կադրերի, ընդհանրապես յուրաքանչյուր աշխատողի տնտեսագիտական պատրաստականության բարձրացումը։ Աշխատավորական լայն մասսաների տնտեսագիտական ուսուցումը և տնտեսական գիտելիքների բազմակողմանի պրոպագանդումը դարձել է կուսակցության գլխավոր խնդիրներից մեկը։

ՍՄԿԿ Կենտկոմի՝ «Աշխատավորների տնտեսական կրթությունը բարելավելու մասին» 1971 թ. սեպտեմբերին ընդունած որոշման հիման վրա հանրապետությունում կազմակերպվեցին ժողովրդական համալսարաններ, լեկտորիումներ, կոմունիստական աշխատանքի դպրոցներ և ուսուցման այլ օղակներ։

Մասսայական տնտեսագիտական ուսուցման կազմակերպման գործում հատկապես մեծ առաջընթաց նկատվեց ՍՄԿԿ XXIV համագումարից հետո։ ՀԿԿ Կենտկոմը, քաղկոմ-շրջկոմները, սկզբնական կուսակցական կազմակերպությունները առավել գործարարությամբ սկսեցին զբաղվել տնտեսագիտական ուսուցման հարցերով։

1971 թ. սեպտեմբերի վերջերին ՀԿԿ Կենտկոմը քննության առնելով անտեսագիտական կրթության ծավալման վերաբերյալ ՍՄԿԿ Կենտկոմի համապատասխան որոշումը, բոլոր քաղկոմ-շրջկոմներից պահանջեց հրավիրել կուսակցական-սովետական ակտիվի խորհրդակցություններ և քննության առնել տնտեսագիտական ուսուցումը բարելավելու ուղղությամբ կուսակցական

---

13 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 465։

կազմակերպությունների խնդիրները։ Այդ խորհրդակցություններին մասնակցեցին և ելույթ ունեցան բազմաթիվ կուսակցական և պետական ղեկավար աշխատողներ։

Այդ ամենի հետևանքով կարճ ժամանակամիջոցում տնտեսագիտական ուսուցման տարբեր օղակներում ընդգրկվածների թիվն ավելացավ։ 1971 թ. վերջերին հանրապետությունում քաղաքական ուսուցման բոլոր օղակներում տնտեսագիտության հարցեր էին ուսումնասիրում 52.000 կոմունիստներ և անկուսակցական ակտիվիստներ։ ՀԿԿ քաղկոմ-շրջկոմներին կից ակտիվի 44 դպրոցներում և յոթ սեմինարներում 2.242 կուսակցական, սովետական և տնտեսական ղեկավար կադրեր ուսումնասիրում էին ՍՄԿԿ արդի տնտեսական քաղաքականության հիմունքները։

Հայաստանի գրեթե բոլոր գործարաններում, ֆաբրիկաներում, շինարարության և տրանսպորտի ձեռնարկություններում 1971—1972 ուստարում ստեղծվել և հաջողությամբ գործում էին 1.600 կոմունիստական աշխատանքի դպրոցներ[14]։

ՀՍՍՀ Մինիստրների սովետի որոշմամբ՝ Երևանի պետական համալսարանում 1971 թ. կազմակերպվեց ղեկավար աշխատողների և ժողովրդական տնտեսության մասնագետների տնտեսագիտական դիտելիքների բարձրացման ու որակավորման բարձրագույն հատուկ ֆակուլտետ, որտեղ յուրաքանչյուր տարի տարբեր ձեռնարկությունների, հիմնարկությունների 300—450 ղեկավարներ և մասնագետներ բարձրացնում են իրենց որակավորումը, խորացնում տնտեսագիտական գիտելիքները։ Միայն Երևանում 1970—1971 ուստարում ստեղծվել և գործում էին 332 տեսական սեմինարներ, 265 միջին օղակի դպրոցներ, որոնցում տնտեսական պրոբլեմներ էին ուսումնասիրում ավելի քան 12.000 կոմունիստներ[15]։ Կադրերի տնտեսագիտական ուսուցման գործը ամուր հիմքերի վրա դրեցին նաև Լենինականի, Կիրովականի, Արտաշատի, Աբովյանի, Իջևանի, Ղափանի, Հոկտեմբերյանի, Շամշադինի, Հրազդանի, Էջմիածնի քաղկոմ-շրջկոմները։

Կադրերի հետ տարվող բազմակողմանի աշխատանքի և ընտրության նկատմամբ հսկողությունն ուժեղացնելու շնորհիվ զգալիորեն բարելավվեց նրանց որակական կազմը։ 1971 թ. հունվարի 1-ի տվյալներով՝ ՍՄԿԿ անդամ էին 8.811 ինժեներ և ճարտարապետ, 2.603 տնտեսագետ, 7.866 տեխնիկ, 279 գիտությունների դոկտոր, 1.879 գիտությունների թեկնածու[16]։ Կուսակցության քաղաքային և շրջանային կոմիտեների 120 քարտուղարներից 117-ը ունեին բարձրագույն կրթություն։

Կոմունիստական շինարարության առաջադրած բարդ խնդիրների հետ բարելավվեց նաև սկզբնական կուսակցական կազմակերպությունների քարտուղարների կազմը։ Այսպես՝ 1971 թ. հունվարի մեկի տվյալներով՝ 4.613 քարտուղարներից բարձրագույն կրթություն ունեին 2.191-ը, թերի բարձրագույն կրթություն՝ 341-ը, միջնակարգ կրթություն՝ 1.801-ը, թերի միջնա-

---

14 Տվյալները վերցված են ՀԿԿ Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնից։

15 ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի ընթացիկ արխիվ, քաղկոմի բյուրոյի 1971 թ. սեպտեմբերի 24-ի նիստի արձանագրություն։

16 Տվյալները վերցված են ՀԿԿ Կենտկոմի կուսակցական վիճակագրության և միասնական կուսատոմսի սեկտորից։

կարդ՝ 279-ը։ Տարրական կրթություն ուներ միայն մեկ մարդ, իսկ 1959 թ. հունվարի 1-ի տվյալներով հանրապետությունում տարրական կրթություն ունեցող սկզբնական կուսակցական կազմակերպությունների քարտուղարների թիվը հասնում էր 179-ի[17]։

Կուսակցության ղեկավար դերի հետագա աճը ցայտուն կերպով դրսևորվեց նաև արտադրության մեջ կոմունիստների ուժերի արդյունավետ տեղաբաշխման, ինչպես նաև պետական և աշխատանքային կարգապահության հետագա ամրապնդման մեջ։ «Թե՛ աշխատանքում, թե՛ հասարակական կյանքում, թե՛ ուսման մեջ, թե՛ կենցաղում՝ միշտ և ամենուրեք, կոմունիստը պետք է մնա կոմունիստ, արժանապատվությամբ կրի մեր լենինյան կուսակցության անդամի բարձր կոչումը»[18],— ասված է կուսակցության XXIV համագումարին ՍՄԿԿ Կենտկոմի տված հաշվետվության մեջ։

Կուսակցության ղեկավար դերի հետագա բարձրացումը բնորոշվեց նաև նրանով, որ հանրապետության կուսակցական կոմիտեները և սկզբնական կուսակցական կազմակերպությունները սկսեցին ավելի հաճախ անդրադառնալ կոմունիստների առաջատար դերի հարցերին։ Կոմունիստների առաջատար դերի բարձրացման խնդիրներին նվիրված հարցերը պարբերաբար քննարկվում էին ՀԿԿ Երևանի քաղաքային կազմակերպության՝ Լենինյան, 26 կոմիսարների, Ստ. Շահումյանի անվան շրջանների, Կիրովականի քաղկոմի, Ապարանի, Եղեգնաձորի և մի շարք այլ շրջկոմների պլենումներում։

Տնտեսության կուսակցական ղեկավարման բարելավումը սերտորեն կապված է նաև արտադրության մեջ կոմունիստ կադրերի տեղաբաշխման և նրանց առաջատար դերի ապահովման հարցերի հետ։ ՀԿԿ Կենտկոմը, կուսակցական կոմիտեները և սկզբնական կուսակցական կազմակերպությունները նյութական արտադրության ոլորտում կոմունիստների դերը բարձրացնելու նպատակով ժողովրդական տնտեսության բոլոր կարևոր տեղամասերը համալրեցին ՍՄԿԿ անդամ-թեկնածուներով։ 1971 թ. հանրապետության արդյունաբերության մեջ աշխատում էին 29.215, տրանսպորտում՝ 5.509, կապի սիստեմում՝ 1.337, շինարարության մեջ՝ 9.267, գիտական հիմնարկություններում՝ 4.549, երկրաբանության բնագավառում՝ 651 ՍՄԿԿ անդամ-թեկնածուներ[19]։

Ըստ արդյունաբերության առաջատար մինիստրությունների 1971 թ. հունվարին կոմունիստների տեղաբաշխման պատկերը հետևյալն էր. գունավոր մետալուրգիայի բնագավառում՝ 2.269, էներգետիկայի՝ 2.144, քիմիական և կաուչուկի արտադրության մեջ՝ 2.866, հաստոցաշինության և գործիքաշինության բնագավառում՝ 1.545, էլեկտրատեխնիկական արդյունաբերության մեջ՝ 4.167, ռադիոտեխնիկական արդյունաբերության մեջ՝ 1.586, էլեկտրոնային արդյունաբերության մեջ՝ 842, շինանյութերի արդյունաբերության մեջ՝ 1.221, թեթև և տեքստիլ արդյունաբերության մեջ՝ 4.883, սննդարդյունաբերության մեջ՝ 2.567, հաղորդակցության ճանապարհների բնագավառում՝ 2.214, ավտոմոբիլային տրանսպորտում՝ 2.382[20]։

---

17 Նույն տեղում։

18 «ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը», էջ 128։

19 Տվյալները վերցված են ՀԿԿ Կենտկոմի կուսակցական վիճակագրության և միասնական կուսուսմի սեկտորից։

20 Նույն տեղում։

Տնտեսական հրատապ խնդիրների լուծման գործում կոմունիստների ակտիվությունը բարձրացնելու նպատակով Երևանի, Կիրովականի, Ալավերդու, Հրազդանի, Ղափանի և մի շարք այլ քաղաքների և շրջանների սկզբնական կուսակցական կազմակերպություններում խնամքով նախապատրաստվեցին և անցկացվեցին «Կոմունիստը արտադրության ռեզերվների լավագույն օգտագործման ուղղությամբ մասսաների կազմակերպիչն է», «Կոմունիստը գիտատեխնիկական առաջընթացի արագացման համար պայքարի մարտիկ է» օրակարգերով ժողովներ։ Այդ ժողովներում հանդես էին գալիս քաղկոմ-շրջկոմների քարտուղարներ, բյուրոյի անդամներ, բաժինների վարիչներ և այլն։

Կուսակցական կոմիտեների՝ որպես քաղաքական ղեկավարման օրգանների դերի բարձրացումն արտահայտվեց նաև այն բանում, որ նրանք սկսեցին առավել գործարարությամբ հենվել սկզբնական կուսակցական կազմակերպությունների վրա։ Վերջիններն այն օղակներն են, որոնցում առանձնահատուկ ցայտունությամբ է արտացոլվում կուսակցության բազմակողմանի աշխատանքը տնտեսության և կուլտուրայի ղեկավարման բնագավառում։

Արդի պայմաններում ոչ միայն փոխվել են սկզբնական կուսակցական կազմակերպություններին առաջադրվող պահանջները, այլև արմատապես տարբերվում են կուսակցության քաղաքականությունն իրագործելու նրանց միջոցներն ու հնարավորությունները։

Հանրապետության սկզբնական կուսակցական կազմակերպությունների գործունեության հետագա բարելավմանը մեծապես նպաստեց ՍՄԿԿ Կենտկոմի՝ «Յարոսլավլի քաղաքային կուսակցական կազմակերպությունում կուսակցական ժողովների անցկացման պրակտիկայի մասին» որոշումը (նոյեմբեր, 1969), որտեղ արտացոլվեցին սկզբնական կուսակցական կազմակերպությունների աշխատանքներին բնորոշ թերությունները, որոնց վրա հարկ եղավ բևեռել գլխավոր ուշադրությունը և համապատասխան հետևություններ անել ներկուսակցական աշխատանքի ոճի ու մեթոդների կատարելագործման հարցերում։

Հանրապետությունում սկզբնական կուսակցական կազմակերպությունների ցանցը դարձավ առավել լայն ու ճկուն։ Միայն Հայաստանի կոմկուսի XXIV համագումարից հետո հանրապետությունում ստեղծվել էին 650 նոր սկզբնական կուսկազմակերպություններ։ ՀԿԿ XXV համագումարի նախօրյակին Հայաստանի կոմունիստական կուսակցությունն իր մեջ միավորում էր 4.613 սկզբնական կուսակցական կազմակերպություններ, որոնցում ստեղծված էին 1.824 արտադրամասային կազմակերպություններ և 3.089 կուսակցական խմբեր[21]։

Ելնելով ՍՄԿԿ Կենտկոմի 1959 թ. հունիսի 26-ի որոշումից, հանրապետության բոլոր արտադրական-կուսակցական կազմակերպություններում ստեղծվեցին վերահսկող հանձնաժողովներ, որոնց շնորհիվ կուսակցական վերահսկողությունը դարձավ նպատակասլաց և գործնական։

Հետազոտական հիմնարկությունների կուսակցական կազմակերպությունները ստանալով ադմինիստրացիայի գործունեությանը վերահսկելու իրավունք, նույնպես սկսեցին առանձնահատուկ տեղ հատկացնել թեմատիկ

---

21 Ա. Ե. Քոչինյան, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի հաշվետու զեկուցումը՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության XXV համագումարին, էջ 84։

պլանների կատարման, գիտական հիմնարկությունների և արդյունաբերական ձեռնարկությունների հետ աշխատանքային կապերի ամրապնդման հարցերին։

Արդյունաբերության պլանավորման և տնտեսական խթանման նոր սիստեմին անցումը սկզբնական կուսակցական կազմակերպություններին լայն հնարավորություն ընձեռեց առավել ակտիվությամբ դրսևորելու իրենց հնարավորությունները և ցուցաբերելու նոր նախաձեռնություններ։ Տնտեսական ռեֆորմը կուսակցության առաջ պահանջ դրեց նոր մոտեցում ցուցաբերել տնտեսության կուսակցական ղեկավարման հրատապ պրոբլեմների լուծման նկատմամբ։ Հարկ եղավ խորը կերպով թափանցել ձեռնարկության, արտադրամասի, տեղամասի տնտեսական գործունեության մեջ, որն իր հերթին ստիպեց էական փոփոխություններ մտցնել ոչ միայն կուսակցական աշխատանքի բովանդակության, այլև ձևերի մեջ։

Կուսակցական կոմիտեները և բյուրոներն իրենց կոլեկտիվներում բազմակողմանիորեն նախապատրաստվեցին տնտեսավարման նոր սիստեմին անցնելուն։ Վաղօրոք պարզվեց յուրաքանչյուր արտադրամասի, տեղամասի, հերթափոխի, ամեն մի բանվորի անելիքը։ Այդ միջոցառումների շնորհիվ հանրապետության ձեռնարկությունները ավելացրին արտադրանքի իրացման ծավալը և շահույթները։ Տնտեսական շինարարության արդի էտապում կուսակցության ղեկավար դերի բարձրացումն արտահայտվեց նաև քննադատության և ինքնաքննադատության ծավալման, տնտեսության ղեկավարման մեջ տեղ գտած թերությունների վերացման ուղղությամբ ձեռնարկված աշխատանքներում։

Կուսակցական կոմիտեները մշտական հոգատարություն էին ցուցաբերում, որպեսզի տնտեսության ղեկավարումն իրականացվի խելացիորեն և նրա մեջ դրվի ստեղծագործական ոգի։ Տնտեսական շինարարության կուսակցական ղեկավարման մեթոդները նախ և առաջ հենվում էին խորը դեմոկրատիզմի վրա, որը բխում է հենց մեր կուսակցության բուն էությունից։

Կոմունիստական շինարարության մեջ կուսակցական ղեկավարման ձևերի կատարելագործումը առաջին հերթին նշանակում է պրակտիկայում հետևողականորեն կենսագործել լենինյան նորմաները և կոլեկտիվության սկզբունքները։ ՍՄԿԿ-ի՝ որպես սովետական հասարակության ղեկավարող և ուղղություն ցույց տվող ուժի դերի հետագա բարձրացումը պահանջում է մշտապես կատարելագործել կուսակցական աշխատանքի ձևերը, տնտեսական շինարարության կուսակցական ղեկավարման մեթոդները, այն հաշվով, որպեսզի դրանք լավագույն ձևով պատասխանեն ծառացող պահանջներին և ապահովեն կոմունիզմի կառուցման մեծ խնդիրների հաջող կատարումը։ ՍՄԿԿ XXIV համագումարին կուսակցության Կենտկոմի տված հաշվետվության մեջ ասված է. «Մեր կուսակցությունը գիտական կոմունիզմի կուսակցություն է։ Նա անշեղորեն առաջնորդվում է մարքս-լենինյան գիտությամբ, արդիականության ամենաառաջավոր, հեղափոխական գիտությամբ, ամեն ինչ անում է նրա հետագա զարգացման համար։ Հասարակական կյանքի երևույթների, նրա գլխավոր տենդենցների տեսական իմաստավորումը կուսակցությանը թույլ է տալիս կանխատեսել հասարակական պրոցեսների ընթացքը, մշակել քաղաքական ճիշտ կուրս, խուսափել սխալներից և սուբյեկտիվիստական լուծումներից»[22]։

22 «ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը», էջ 135։

ПОВЫШЕНИЕ РУКОВОДЯЩЕЙ РОЛИ ПАРТИИ В ХОЗЯЙСТВЕННОМ СТРОИТЕЛЬСТВЕ

С. Ш. МКРТЧЯН

Резюме

Период между XXI—XXIV съездами КПСС ознаменовался возрастанием руководящей роли партии в хозяйственном строительстве.

Компартия Армении, исходя из новых задач коммунистического строительства, обеспечила более высокий уровень политического и организационного руководства промышленностью, подняла творческую активность трудящихся масс в управлении производством. Повышение роли партийных комитетов как органов руководства проявилось и в том, что они стали больше опираться на первичные парторганизации, усилив научное руководство партийной работой в промышленности.